ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՕՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍՈՒՐԷՆ ՁՈՒՐԱԲԵԱՆ
ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Սիրելի պրն. Ջուրաբեան,

Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներից ճանաչում ենք Ձեզ եւ մշտապէս ականատես ենք եղել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին: Այսօր Տիրոջ կամքով ուրախ առիթն ունենք Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ հաւատաւոր հայորդուդ եւ անուանի բժիշկ-գիտնականիդ, որ տասնեակ տարիներ անընդհատ սիրով ու նուիրումով Ձեր կեանքն ու ասպուածահաճոյ գործը ընծայաբերում էք մեր երկրին ու ժողովրդին:

Բժշկութեան ասպարէզում մասնագիտական փորձառութիւնը Դուք սկսեցիք Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ Ձեր գիտելիքներն ու կարողութիւնները ի սպաս բերելով մարտի դաշտերում վիրաւորուած զինուորների ապաքինմանը: Պատերազմի աւարտին վերադառնալով Հայրենիք, հիմնադրեցիք նեարդավիրաբուժական բաժանմունքը եւ ամբողջանուէր ոգով ծառայեցիք մեր երկրում բժշկութեան այս կարեւոր ճիւղի զարգացմանը: Այսօր աւելի քան վեց տասնամեակների արդիւնաւոր ծառայութեան վաստակն է Ձեր ուսերին: Բազմաթիւ հիւանդներ Ձեր ձեռքերով վերագտել են իրենց առողջութիւնը, եւ նրանց հոգիներում երախտագիտութիւնն ու բարի մաղթանաց հայցն է առ Բարձրեալ Տէրը՝ Ձեր եւ Ձեր ընտանիքի համար:

Ձեր անունն այսօր ճանաչուած է ինչպէս Հայաստանում, այնպէս եւ արտերկրում՝ որպէս առաջնակարգ նեարդաբան, անխոնջ գիտնական եւ մանկավարժ: Ձեր հարիւրաւոր ուսումնասիրութիւնները, գրքերն ու հրապարակումները, միջազգային գիտաժողովներում ու հեղինակաւոր կրօջախներում դասախօսութիւններն ու զեկուցումները արժանացրել են Ձեզ բազում կոչումների ու պարգեւների: Ձեր ղեկավարութեամբ բազմաթիւ երիտասարդներ

պատրաստել են գիտական աշխատութիւններ՝ առաջին քայլերը կատարելով գիտութեան լուսաւոր անդաստանում:

Հայրենի մեր երկրին եւ սիրեցեալ ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յեւպայսու եւս շարունակելու Ձեր կարեւոր առաքելութիւնը հաւատաւոր մեր ժողովրդի կեանքում:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ-
ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 580